

պատմածքները, քարգմանութիւններ (Գեօքէից, Բայրընից, Հայնէից, Բէրանժէից, Քոնիովից, ինչպէս եւ ծանօ-

քագրութիւններ, բառարաններ, ժամանակակից մամուլի կարծիքները եւ գնահատականները Դոդոնիսեանի մասին:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԿԵԴՐ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ռումանահայ կեդր. Մատենադարանը՝ հիմնած տասնեակ մը տարի առաջ Պուքրէշի մէջ՝ այս պահուս իր տեսակին մէջ ամենէն պատկառելի Հայ հիմնարկութիւնն է բովանդակ Պալեաններու մէջ, եւ իր պարունակութեամբը ու այցելուներու վրա ձգած տպաւորութեամբը պատիւ կը բերէ հայ անունին: Թափած ջանքերու շնորհիւ ոչ միայն կարելի եղած է ցարդ համախմբել հոն ստաւար քիւ մը արժէքաւոր եւ յանախ հազագիւտ գիրքերու եւ պարբերականներու, այլ եւ պատմական ու գեղարեստական արժէք ունեցող բազմաքիւ առարկաներ, — նկարներ, ձեռագիրներ, վաւերագրեր, դրամներ, փորագրութիւններ, բանածոներ եւ այլն, — որոնք Մատենադարանին տեսակ մը հայկական քանգարանի բնոյթը կու տան:

Զեռնարկած ըլլալով յառաջիկայ աշունէն նոր զարկ մը տալ մատենադարանին ոչ միայն զայն հանրութեան բանալով իրքեւ ընթերցալայր, այլ եւ առաջ ու ազդիւր հայրայրերով հայ եւ օտար ուսումնասիրողներու ու նաեւ հայ արեստի մտոյններ ի ցոյց դնելով այցելուներու՝ վարչութիւնը անհրաժեշտ կը զգայ հրապարակային կոչ ուղղել հայ հասարակութեան՝ ամօր աջակցու-

քիւնը խնդրելով Մատենադարանի նոսրացման համար:

Ռումանիոյ եւ արտասահմանի հայ ժողովուրդին դիմելով՝ Մատենադարանի վարչութիւնը ջերմապէս կը խնդրէ իրեն տրամադրել ամէն գիրք եւ առարկայ, որ կրնայ որ եւ է շահեկանութիւններ կայացնել իր գրական, գեղարեստական եւ պատմական արժէքին համար, մանաւանդ նորագոյն հայ գրականութեան եւ հայագիտութեան վերաբերեալ գիրքեր, որոնցմէ զգալի կերպով զուրկ է մնացած Մատենադարանը ցարդ:

Մեծ շնորհակալութեամբ պիտի ընդունի նաեւ ինչ որ կրնայ շահագրգռութիւն արթնցնել օտար այցելուներու մէջ, ինչպէս հայկական դրամ, դրոշմագրութիւն, ասեղնագործութիւն, մետաղեայ փորագրութիւն, մանրանդրար, լուսանկար եւ այլն, որոնք մըշտական կերպով ի ցոյց պիտի դրին յատկապէս պատրաստած ապակեղարաններու մէջ:

Առաջումները կը խնդրի ընել Մատենադարանի վարչութեան ատենապետին անունով.—

Kevork Hagi Artin,

Str. Oituz, N° 3,

Bucarest (Roumanie)

ԵՐԿՈՒ ՄԵԾԱՐԺԷՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկրագնդի տարբեր կողմերից երկու մեծարժէք գրքեր հասան վերջերս: Մէկը հնդկահայ վաստակաւոր բանասէր Մեսրոպ Բ. Սէրի «Հայերը Հնդկաստան»

նում» — «Armenians in India» հատորն է՝ լոյս տեսած կալկաթայում, միւսը՝ ամերիկահայ երիտասարդ մտաւորական Ա. Սարգսեանի աշխատութիւն